

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱՉՅԱ ԱԸԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԼՈՒՄԻՆԵ ԶՈՀՐԱԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ  
ՀԱՅԵՐԵՆԻ, ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆԻ ԲԱՅԻ ԴԻՄԱՎՈՐ ԶԵՎԵՐԻ  
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ-ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

**ՄԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2016**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Գ. Համբարձումյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Մ. Խաչատրյան բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Գ. Դալայան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի նոյեմբերի 14-ին, ժամը՝ 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. հոկտեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
բ.գ.թ.,դոցենտ

Ն.Մ.Սիմոնյան

## ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ՆՊՏԱՍԿԸ:** Ատենախոսության մեջ համաժամանակյա մոտեցմամբ ներկայացրել ենք *հայերենի, անգլերենի* և *ռուսերենի* դիմավոր բայի տիպաբանական առանձնահատկությունները՝ ըստ բայի քերականական կարգերի, զուգադրել և նշել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Մեր նպատակն է եղել կատարել ոչ միայն լեզվի տիպին, բնորոշ, այլև ոչ բնորոշ առանձնահատկությունների քննություն, օրինակ՝ *հայերենի* խոնարհման համակարգում քերականական նոր իմաստի արտահայտության համար, բայաձևի բաղադրիչների կցումից բացի, ո՞ր եղանակն է առավել հաճախադեպ՝ բառի ներքին թեքումը, թե՞ բառ-մասնիկների կիրառությունը, *ռուսերենում՝* բաղադրիչների կցումը, թե՞ բառ-մասնիկների կիրառությունը, *անգլերենում՝* բաղադրիչների կցումը, թե՞ բառի ներքին թեքումը:

**ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԸ:** *Հայերենի, անգլերենի* և *ռուսերենի* լեզվական տիպերի վերլուծության ժամանակ կիրառել ենք զուգադրական ուսումնասիրության երեք հայտնի մեթոդները՝ *զուգադրական հիմունքի սահմանում, զուգադրական մեկնաբանություն, տիպաբանական բնութագիր*<sup>1</sup>:

Նախ *սահմանել ենք* երեք լեզուներում բայ խոսքի մասը՝ ըստ քերականական կարգերի, ապա քննության առել բայի դիմավոր ձևերը: Հայերենի տվյալները հիմք են բացահայտելու զուգադրվող մյուս լեզուներում լեզվական իրողությունների և ընդհանրությունները, և՛ տարբերությունները:

Զուգադրության արդյունքի հիման վրա մեկ ընդհանուր սկզբունքով կազմել ենք դիմավոր բայերի բանաձևերը և ըստ վերջիններիս կազմության ձևի զուգադրվող երեք լեզուների տվյալները ենթարկել *տիպաբանական վերլուծության*:

Այնուհետև ներկայացրել ենք տվյալ լեզվական *տիպի բնութագիրը*, այն է՝ խոնարհված ձևերի կազմության ժամանակ այս կամ այն լեզվում ինչ չափով է արտահայտված թեքականության, կցականության և անջատականության հատկանիշը:

Եղանակի քերականական կարգի քննությունը կատարել ենք բանաձևերի կազմության մեթոդով, թեև ուսումնասիրության նպատակը բանաձևեր կազմելը չէ, այն ընդամենը միջոց է դիմավոր բայն ըստ բաղադրիչների վերլուծելու:

**ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԸ:** Ատենախոսության ուսումնասիրության նյութը զուգադրվող լեզուների քերականական կարգերի վերլուծությունն է: Լեզվական տիպին բնորոշ հիմնական առանձնահատկությունները վեր ենք հանել *եղանակի քերականական կարգի* վերլուծության միջոցով: Զուգադրման առարկա են ոչ միայն լեզվական ընդհանրությունները, այլև տարբերությունները: Զուգադրվող լեզուների բայի

<sup>1</sup> Լ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Ե., 2008, էջ 247-248:

դիմավոր ձևերը նախ զուգադրել ենք ըստ իմաստային արտահայտության, ապա ըստ բանաձևերի վերլուծության: Ուսումնասիրության նյութը սահմանափակվում է ձևաբանության շրջանակում:

Չուգադրվող երեք լեզուների դիմավոր բայը քննել ենք նաև ըստ բայաձևի քերականական մասնիկների արտահայտած իմաստի և ըստ բայաձևի բաղադրիչների կազմության ձևի, հաշվել եղանակաժամանակային ձևերում մենիմաստ, բազմիմաստ քերականական մասնիկների, բառ-մասնիկների առավելագույն թիվը և կատարել վիճակագրություն:

*Հայերենի, անգլերենի և ռուսերենի* զուգադրական-տիպաբանական քննության ժամանակ *հիմք-լեզուն հայերենն* է, որի խոնարհման համակարգի ձևաբանական առանձնահատկությունները հիմք ենք ընդունել *ռուսերենի* և *անգլերենի* ձևաբանական նույն մակարդակների միավորները *զուգադրական-տիպաբանական* քննության ենթարկելու համար:

**ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Լեզուների տիպաբանության դասավանդման ժամանակ լեզվական երեք տիպերի կցական, թեքական, անջատական, առանձնահատկությունները հիմնականում ներկայացվում են Հայաստանում մեծ տարածում ունեցող լեզուների՝ ռուսերենի և անգլերենի օրինակներով, սակայն ցայսօր չկա համապարփակ մի ուսումնասիրություն, որ կծառայի որպես ուսումնական ձեռնարկ երեք լեզուների զուգադրման միջոցով տիպաբանական առանձնահատկությունները վեր հանելու համար: Ատենախոսության նյութը երեք լեզուների դիմավոր բային առնչվող զուգադրական-տիպաբանական ամբողջական ուսումնասիրություն է: Ատենախոսության մեջ հավասարապես զուգադրել ենք երեք լեզուների դիմավոր բայի լեզվական առանձնահատկությունները, սակայն վերլուծության հիմք-լեզուն *հայերենն* է:

**ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՈՒԸ:** Լեզվաբանության մեջ կան լեզուների զուգադրական-տիպաբանական ուսումնասիրություններ, սակայն լեզվաբանական երեք տարբեր տիպերով բնորոշվող *հայերենի, անգլերենի* և *ռուսերենի* դիմավոր բայի համաժամանակյա ամբողջական քննություն չկա: Առաջին անգամ փորձ է արվում մեկ ընդհանուր սկզբունքով զուգադրելու տարբեր տիպերի պատկանող երեք լեզուների դիմավոր ձևերը, կազմելու դրանց տիպաբանական բանաձևերը, զուգադրելու և վերլուծելու լեզվաբանական այս կամ այն տիպին բնորոշ և ոչ բնորոշ առանձնահատկությունները, ինչպես նաև նմանությունների և տարբերությունների հիման վրա կատարելու զուգադրվող լեզուների *կցական, թեքական, անջատական* տիպերին բնորոշ հատկանիշների թվային ու տոկոսային վերլուծություն:

**ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ:** Չուգադրվող լեզուների խոնարհման համակարգի վերլուծությունը հարուստ նյութ է տալիս լեզվական տիպերի բնորոշման համար: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, Հայաստանի բուհերում տիպաբանությանն առնչվող առարկաների դասավանդման ժամանակ

վերլուծության առարկա են դառնում Հայաստանում ամենամեծ տարածում ունեցող տարբեր տիպերի պատկանող երկու լեզուների՝ *ռուսերենի* և *անգլերենի* լեզվական իրողությունները, բայց երկու լեզուների դիմավոր բային առնչվող տիպաբանական համակարգային ուսումնասիրություններ գրեթե չկան: Ատենախոսության նյութի տեսական, քանակային վերլուծությունը, ինչպես նաև եզրակացության մեջ ներկայացված դրույթները կարող են գործնական նշանակություն ունենալ լեզուների տիպաբանությամբ զբաղվող առարկաների դասավանդման ժամանակ: Ատենախոսության նյութը կարող է կիրառվել նաև թարգմանությանն առնչվող տեսական և գործնական դասընթացներում:

**ԱՏԵՆԱՍՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Թեմայի հիմնադրույթներն արտացոլված են գիտական տարբեր հանդեսներում, հեղինակի տպագրած հինգ հոդվածներում:

**ԱՏԵՆԱՍՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ծավալը 152 էջ է:

**Ներածության** մեջ ներկայացրել ենք զուգադրվող լեզուների՝ հայերենի, ռուսերենի և անգլերենի տիպաբանական առանձնահատկությունները՝ համապատասխանաբար որպես կցական, թեքական և անջատական տիպին պատկանող լեզուներ, մատնանշել ուսումնասիրության առարկա դարձած լեզվական երեք տիպերի հատկանիշները, որոնց հիման վրա առաջին և երկրորդ գլուխներում կատարել ենք դիմավոր բայի քննություն: Այսպես, հնդեվրոպական լեզուները հիմնականում բնորոշվում են թեքականության հատկանիշով, մինչդեռ ժամանակակից հայերենն ունի լեզուների կցական տիպի առանձնահատկություններ, ռուսերենը՝ թեքական, անգլերենը՝ անջատական: Սակայն դա չի նշանակում, որ, օրինակ, հայերենը չունի լեզուների անջատական կամ թեքական, իսկ անգլերենը և ռուսերենը՝ կցական տիպին բնորոշ հատկանիշ: Օրինակ, հայերենի բայի դիմաթվային վերջավորությունները՝ *-ւ, -նք*, քերականական մի քանի իմաստ են արտահայտում՝ *լռել, լռենք*, ռուսերենում՝ *-ca(св)* մասնիկն ունի քերականական մեկ իմաստ և կցվում է բային՝ առանց փոփոխության ենթարկելու նրա արմատը (*готовиться, успокоиться*), իսկ *անգլերենի* անորոշ ներկայի եզակի երրորդ դեմքն արտահայտվում է ոչ թե սպասարկու բառերի, այլ քերականական բազմիմաստ մասնիկի միջոցով՝ *-s(es)*:

Զուգադրական-տիպաբանական ուսումնասիրության առարկան դիմավոր բայերն են, սակայն նախքան դրանց քննությանն անդրադառնալը ներածության մեջ ներկայացրել ենք նաև զուգադրվող լեզուներում *բայի անորոշ* կամ *եղակետային ձևը*՝ համապատասխան ցուցիչներով: *Հայերենում* բայի *անորոշ ձևը* կոչվում է նաև *եղակետային*, քանի որ այն՝ բայակերտ վերջավորություններով,

որոշիչ դեր ունի անցյալ կատարյալի հիմքի կազմության, հետևաբար նաև եղանակների կազմության համար: Բայի *ելակետային ձևի հիմքը*, որպես կանոն, համընկնում է *անկատարի հիմքի հետ*՝ ի տարբերություն *ռուսերենի: Ռուսերենում* բայի անորոշ ձևը միշտ չէ, որ կարող է ելակետային լինել ժամանակաձևերի կազմության համար: Բայի ելակետային ձև կարող է լինել և՛ *անկատար*, և՛ *կատարյալ* կերպի բայը՝ *играть-поиграть, читать-почитать*: Մասամբ ելակետային կարելի է համարել նաև *անզլերենի* կանոնավոր բայերի անորոշ ձևը (*Infinitive*):

**Առաջին գլխում** զուգադրման միջոցով քննության ենք առել լեզուների քերականական կարգերն առանձին-առանձին: Եթե *դեմքի* և *թվի, ժամանակի, կերպի, սեռի (բայական և անվանական)* քերականական կարգերի քննությունն առավել տեսական բնույթ է կրում, ապա *եղանակի քերականական կարգի* քննությունը՝ նաև գործնական, քանի որ ուսումնասիրության արդյունքում կատարել ենք կցական, թեքական և անջատական լեզուների տիպերին բնորոշ հատկանիշների թվային և տոկոսային վիճակագրություն: Բայց որքան էլ վերոնշյալ քերականական կարգերը հատուկ են զուգադրվող երեք լեզուներին այն տարբերությամբ, որ այս կամ այն քերականական կարգի ընկալման սահմանները կամ դրանց համապատասխանությունը երեք լեզուներում կարող է բացարձակ չլինել (օրինակ՝ կերպի կամ եղանակի քերականական կարգերը), ապա կան նաև քերականական կարգեր, որոնք բնորոշ են զուգադրվող լեզուներից միայն մեկին: Օրինակ, *ռուսերենում* բայական սեռից բացի՝ դիմավոր բայի քերականական կարգերի թվում առանձնացվում է նաև բայի *անվանական սեռը*՝ արական, իգական և չեզոք, որը բնորոշ չէ զուգադրվող մյուս երկու լեզուներին:

*Դեմքի* և *թվի քերականական կարգերը* քննել ենք միասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրվող լեզուներում այն հիմնականում արտահայտվում է քերականական մեկ մասնիկի միջոցով: Դեմքի և թվի քերականական կարգերի արտահայտման ընդհանրություններ ենք նկատել հատկապես հայերենի և ռուսերենի, քան անզլերենի և զուգադրվող մյուս երկու լեզուների միջև: *Անզլերենում դեմքի* և *թվի* գաղափարն արտահայտվում է անկախ գործածություն ունեցող բառ-մասնիկներով՝ անձնական դերանուններով: Վերջիններս, ինչպես *անզլերենում*, այդպես էլ *հայերենում* և *ռուսերենում*, արտահայտում են միաժամանակ և՛ դեմքի, և՛ թվի գաղափար: Մակայն եթե *անզլերենի* դիմավոր բայի կազմության ժամանակ անձնական դերանունների առկայությունը պարտադիր է, քանի որ բայը դեմքի և թվի քերականական մասնիկներ չունի և, հետևաբար, առանց անձնական դերանունների գործողություն կատարողի դեմքի և թվի վերաբերյալ տեղեկություն չի հաղորդվում, ապա *հայերենում* հաղորդվում է: *Հայերենում* անձնական դերանունները հավելյալ տեղեկություն են արտահայտում գործողություն կատարողի դեմքի և թվի վերաբերյալ. *հայերենում՝ սիրում եմ և քս սիրում եմ*,

անգլերենում՝ միայն *I love*: *Ռուսերենի* դիմավոր բայի կազմության ժամանակ անձնական դերանունները *հայերենի* և *անգլերենի* համեմատությամբ ունեն միջին կարևորություն: Կախված ժամանակաձևի կազմության առանձնահատկություններից՝ անձնական դերանունները խոնարհված բայի կիրառության ժամանակ կարող են լինել պարտադիր և ոչ պարտադիր, օրինակ՝ *я играю – играю*. այս դեպքում դերանունը դեմքի և թվի հավելյալ իմաստ է հաղորդում, իսկ *я играл, ты играл, он играл*–ի դեպքում առանց անձնական դերանվան գործողություն կատարողի դեմքի մասին տեղեկություն չի հաղորդում: *Играл* բայը *-и (играл - играл+и)* հոգնակերտ քերականական մասնիկի բացակայությամբ ցույց է տալիս միայն թվի քերականական կարգ:

*Կերպի քերականական կարգը* հատուկ է գուգադրվող լեզուներին, սակայն նրա ընկալման սահմանները տարբեր են: Համեմատելով երեք լեզուների կերպերը՝ ավելի շատ ընդհանրություն ենք տեսել հայերենի և ռուսերենի, քան հայերենի և անգլերենի կամ ռուսերենի և անգլերենի կերպի քերականական կարգերի միջև: Պատճառը *հայերենում* և *ռուսերենում* կերպի և ժամանակի քերականական կարգերի միջև եղած կապն է:

*Անգլերենում* կերպի քերականական կարգը կապված է ոչ աղքան ժամանակի քերականական կարգի, որքան գործողության կատարման ձևի հետ, այն է՝ գործողությունն ընթացքի մեջ է, թե՞ ավարտված: Ըստ այդմ՝ *անգլերենում* կա երկու կերպ՝ *անորոշ (Indefinite)* և *շարունակական (Continious)*:

*Ռուսերենում* կերպի քերականական կարգը բայական համակարգի ամենաբարդ բաժինն է: Բացառությունները շատ են, կատարյալ և անկատար կերպերի կազմության ձևերը՝ ամբողջությամբ չհամակարգված: Կատարյալի և անկատարի կերպի բայերը կազմում են կերպային հակադրություն, որով պայմանավորված է ժամանակաձևերի կազմությունը: Կերպային հակադրության մեջ մտնող երկու բայերը նույն են *բանային*, տարբեր՝ *քերականական իմաստի* արտահայտության տեսանկյունից՝ *говорить-поговорить, любить-полюбить*:

Հայերենին, անգլերենին և ռուսերենին բնորոշ է նաև *ժամանակի քերականական կարգը*՝ երեք ժամանակներով՝ ներկա, անցյալ և ապառնի: Սակայն կախված լեզվամտածողության տարբերությունից և ժամանակաձևերի թվից՝ ժամանակներից յուրաքանչյուրի ընդգրկվածությունը տարբեր է: Ռուսերենում ժամանակի քերականական կարգը հատուկ է միայն սահմանական եղանակին: Հրամայական և ըղձական եղանակները չունեն ժամանակի քերականական կարգ: Պատճառը ժամանակի և կերպի քերականական կարգերի սերտ կապն է: Ռուսերենում ներկա, անցյալ և ապառնի ժամանակների կազմությունը բխում է բայերի կերպային հակադրությունից: Անգլերենի բայի ժամանակի քերականական կարգն ընդգրկունությամբ մոտ է հայերենի ժամանակի քերականական կարգին. տասնվեց ժամանակաձևերը ընդգրկված են ներկային նախորդող և հաջորդող ժամանակների կազմում: Սա միակ նմանությունը չէ: Անգլերենում ևս կա երկանդամ հակադրություն. ամեն

Ժամանակ ունի ներկայի և անցյալի կամ ապառնիի և անցյալ ապառնիի արտահայտությունը՝ I call (կանչում եմ)-I called (կանչում էի), I am reading (կարդում եմ)-I was reading (կարդում էի), she has speaked (խոսել է)-she had speaked (խոսել էր):

*Սեռի քերականական կարգի* կազմության և ըմբռնման սկզբունքները երեք լեզուներում էապես տարբերվում են: Բայասեռի քննության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն տվյալ բայի իմաստային և ձևաբանական, այլև նախադասության ևս երկու անդամի՝ գործողություն կատարողի և գործողություն կրողի շարահյուսական առանձնահատկությունները: Այս հանգամանքն անհրաժեշտ է հաշվի առնել հատկապես հայերենի և ռուսերենի բայասեռի քննության ժամանակ, քանի որ, ի տարբերություն վերոնշյալ երկու լեզուների, անգլերենում բայի սեռն արտահայտվում է վերլուծական ճանապարհով, հետևաբար շփոթել, որ տվյալ կառույցը կրավորական, ներգործական կամ չեզոք (միջին) սեռի է, անհնար է: Հայերենի, ռուսերենի և անգլերենի բայասեռի տեսակների վերաբերյալ լեզվաբանները միակարծիք չեն, ուսումնասիրության շրջանակում անդրադարձել ենք սեռի երեք հիմնական տեսակներին՝ ներգործական, կրավորական, չեզոք:


*Բայի անվանական սեռը* միակ քերականական կարգն է, որն ընդհանուր չէ ուսումնասիրվող երեք լեզուների համար: Այն հատուկ է միայն ռուսերենի դիմավոր բային: Հին անգլերենում եղել է բայի անվանական սեռ, սակայն պատմական զարգացման ընթացքում լեզուն կորցրել է այն: Բայն ունի անվանական սեռի *մասնակի դրսևորում*: Դրսևորումը մասնակի ենք համարում այն պատճառով, որ վերաբերում է միայն անորոշ ներկայի եզակի երրորդ դեմքին: Գործողություն կատարողի սեռի վերաբերյալ տեղեկություն են արտահայտում եզակի թվի երրորդ դեմքի անձնական դերանունները՝ *he, she, it*: Սակայն վերջիններինս հետ գործածվող բայաձևերում չկա քերականական մասնիկով արտահայտված երեք սեռի տարբերակում. *he plays/she plays/it plays, he worked/she worked/it worked, he shall play/she shall play/it shall play*: Բայի անվանական սեռի քերականական կարգը բնորոշ չէ *հայերենի* դիմավոր բային: Անձնական դերանունները ևս չեն արտահայտում բայի անվանական սեռի տարբերակում:

*Շղանակի քերականական կարգի* զուգադրական-տիպաբանական քննությունն առավել նպատակային դարձնելու նկատառումով կազմել ենք բանաձևեր՝ ըստ զուգադրվող երեք լեզուների բայի դիմավոր ձևերի: Բանաձևերի միջոցով զուգադրել ենք ժամանակաձևերից յուրաքանչյուրի կազմության առանձնահատկությունները մյուս լեզվի նույն ժամանակաձևի առանձնահատկությունների հետ, օրինակ, հաշվել ենք՝ զուգադրվող լեզուներից որ մեկի ո՞ր ժամանակաձևն ունի բառաձևերի կամ բառաձևերի բաղադրիչների առավելագույն թիվը, ինչո՞վ է դա պայմանավորված, կամ ո՞ր լեզվում ո՞ր ժամանակաձևն է դրսևորում բայաձևերի բազմազանություն:



Ըստ այդմ՝ կազմել ենք նաև տվյալ ժամանակաձևի դիմավոր ձևի հատկանիշներն ամփոփող գծապատկերներ: Օրինակ, քննության ենք առել ներկա անկատար ժամանակձևի հնարավոր բոլոր տարբերակները, ներկայացրել ենք դրանք բանաձևերի և բայաձևի բաղադրիչները սահմանազատող գծապատկերների միջոցով. հայերենում՝ *խոսում էմ* -  $Ad+B$  (պարզ), *մոտենում էմ* -  $Ac+d+B$  (տուկածանցավոր), *կտրատում էմ* -  $Akd+B$  (բազմապատկական), մոտեցնում էմ -  $Ac3d+B$  (պատճառական): Ռուսերենում՝ *шить-Шью* -  $Ab$  (արմատական բաղադրիչով), *тЕреть-тИру* (ձայնդարձ), *виДеть-виЖу* (հերթագայություն) կամ *сПать-сПлю* (հնչյունի հավելում ունեցող դիմավոր ձևեր)՝  $Ab$ , *заморОЗить-заморАЖивать* -(с)Асb (ձայնդարձով և համակցված հերթագայությամբ ուղեկցվող ածանցում), *преодолеть-преодолеВАю* -  $Ac2b$  (կատարյալ կերպից միայն ածանցմամբ կազմված դիմավոր ձևեր), *решать-решаю* -  $Ac2b$ : (լծորդը պահպանած դիմավոր ձև): *Անգլերենում* ներկա անկատար ժամանակաձևի կազմության բանաձևային բազմազանություն չկա, ներկա անկատարն ունի մեկ բանաձև՝  $I/she\ run(s)$ ՝  $B_1+A(b)$  (տառանշանակման սկզբունքները տե՛ս ատենախոսությունում):

Լեզվի տվյալ տիպին բնորոշ հատկանիշները վեր հանելու համար *եղանակի քերականական կարգի* քննության ժամանակ *հայերենի, ռուսերենի* և *անգլերենի* ներկա ժամանակի բայաձևերը վերլուծել ենք երկու տեսանկյունից՝ ըստ բայաձևի քերականական մասնիկների արտահայտած իմաստի՝ *մենիմաստ, բազմիմաստ*, և ըստ բայաձևի բաղադրիչների կազմության ձևի՝ *կցում, թեքում, անջատում*: Գծապատկերների կազմության սկզբունքը ներկայացնենք լեզուներից յուրաքանչյուրի դիմավոր բայի օրինակներից միայն մեկով:



*Առաջին գլխում* քննել ենք նաև զուգադրվող լեզուների անկանոն բայերը՝ հանգելով այն եզրակացության, որ զուգադրվող լեզուներում չկա անկանոնության ընդհանուր մի հատկանիշ, սկզբունք, ըստ որի՝ կդասակարգվեն անկանոն բայերը: Յուրաքանչյուր լեզվի բայական անկանոնությունը բխում է տվյալ լեզվի պատմական զարգացման առանձնահատկություններից: Օրինակ՝ հայերենում անկանոնությունը դրսևորվում է անկատար և կատարյալ հիմքերի, ռուսերենում՝ ինչպես բայի հիմքի, այդպես էլ դիմաթվային վերջավորությունների, իսկ անգլերենում՝ երկրորդ և երրորդ հիմքերի կազմության ժամանակ: Զուգադրվող լեզուների անկանոն բայերի առանձնահատկությունները ընդհանրացրել ենք բանաձևերի միջոցով:

**Երկրորդ գլխում** ներկայացրել ենք լեզուներից յուրաքանչյուրի այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ չեն զուգադրվող մյուս լեզուների բայական համակարգերին: Այսպիսով, *հայերենի* դիմավոր բային բնորոշ են.

- 1) և՛ ժխտական խոնարհում, և՛ արգելական հրամայական,
- 2) երկրորդական վերլուծական ժամանակներ,
- 3) պատճառական բայեր:

*Ռուսերենի* դիմավոր բային բնորոշ են.

- 1) բայի անվանական սեռ (род),
- 2) կերպային զույգեր (совершенный-несовершенный вид),
- 3) անցյալ ժամանակի և ստորադասական եղանակի բայաձևերում դերանունով՝ բայի դեմքի քերականական կարգի արտահայտություն,
- 4) շարժման բայեր:

*Անգլերենի* դիմավոր բային բնորոշ են.

- 1) դերանուններով՝ բայի դիմաթվային իմաստի արտահայտություն,
- 2) մոդալ բայերով կազմություններ,
- 3) բայական բառակապակցություններ:

Զուգադրվող երեք լեզուների վերոնշյալ առանձնահատկությունները հաճախ էական նշանակություն ունեն տվյալ լեզվի դիմավոր բայը բնորոշելիս, հատկանշական են այն առումով, որ վերջիններս մյուս լեզվում չունեն զուգահեռներ, Դրանց մի մասը ներկայացրել ենք առաջին գլխում, քննությունից դուրս մնացածները ներկայացրել ենք երկրորդ գլխում:

*Հայերենի* պատճառական բայերը, անցյալ կատարյալում ենթարկվելով *ն>ր* հերթազայության, խոնարհվում են կանոնավոր բայերի նման՝ թե՛ իմաստային, թե՛ քերականական տեսանկյունից կազմելով *հայերենի* խոնարհման համակարգի կարևոր բաղկացուցիչ, մինչդեռ *հայերենի* պատճառական բայերը *ո՛չ ռուսերենում, ո՛չ անգլերենում* չունեն համակարգային արտահայտություն: Պատճառական բայերի գաղափարը երկու լեզուներում հիմնականում արտահայտվում է նկարագրական եղանակով: Ի տարբերություն *ռուսերենի* և *անգլերենի՝ հայերենում*, բացի գլխավոր ժամանակների վերլուծական ձևերից, կան նաև *երկրորդական բաղադրյալ ժամանակներ*, որոնք բացառապես վերլուծական կազմության են: *Ո՛չ ռուսերենում, ո՛չ անգլերենում* երկրորդական վերլուծական ժամանակները չունեն համակարգային արտահայտություն: *Զուգադրվող լեզուներում* դրանց իմաստն արտահայտվում է նկարագրական եղանակով, երբեմն էլ, ըստ համատեքստի, կարող է հարմարեցվել ժամանակներից մեկին, օրինակ՝ հայերենի երկրորդական բաղադրյալ ժամանակի պայմանական եղանակը՝ *անգլերենի* ապառնի շարունակականին, և ռուսերենի բարդ ապառնիին. *Ես սպասելիս կլինեմ քեզ: I shall be waiting for you. Я буду ждать тебя.*

*Ռուսերենում* կան գործողության ուղղություն ցույց տվող տասնչորս զույգ բայեր՝ *глаголы движения*, որոնք զույգ չեն կազմում կերպային հակադրությամբ.

դրանք նույն կերպի բայեր են և տարբերվում են արտահայտած գործողության ձևով: Ռուսերենի բայական համակարգի տասնչորս կենսունակ բայերը լինում են երկու տեսակի. բայեր, որոնք ցույց են տալիս մեկ ուղղությամբ մեկանգամյա գործողություն՝ *идти, ехать, лететь, плыть (однаправлённые)*, և բայեր, որոնք ցույց են տալիս տարբեր ուղղություններով մի քանի անգամ կատարվող գործողություն՝ *ходить, ездить, летать, плавать, (разнонаправлённые)*: Երկու խմբի բայերն ունեն անկատար կերպ:

*Ռուսերենի* շարժման բայերը հատուկ չեն *ն՛չ հայերենին, ն՛չ անգլերենին*: Եթե *ռուսերենում*, անկախ նախաձանցի՝ բային հաղորդած իմաստից, անկատար և կատարյալ կերպի շարժման բայերի արմատը նույնն է, ապա *հայերենում* և *անգլերենում* արտահայտվում է տարբեր բայերի, հաճախ նաև *բառային հարադրությունների* միջոցով: Օրինակ՝ *подойти-մոտենալ, to approximate*, և *отойти-հեռանալ, to leave*, կամ *выйти-դուրս գալ, go out, войти-մտնել, to enter, обойти-շրջանցել, come around, прийти-գալ, to come*: Վերանշյալ օրինակները ցույց են տալիս, որ *ռուսերենում* արմատական բաղադրիչը և անորոշի վերջավորությունը նույնն են, իսկ *հայերենում* և *անգլերենում* արտահայտվում են տարբեր բայերի միջոցով:

*Հայերենում* մասամբ կարելի է *ռուսերենի* շարժման բայերի համարժեք համարել բազմապատկական ածանց ունեցող և արմատի կրկնությամբ կազմվող բայերը, որոնք ցույց են տալիս գործողության կրկնություն, բազմակիություն: Օրինակ, *птица летит* և *птица летает, ребёнок бежит* և *ребёнок бегает* նախադասություններում մեկ անգամ մեկ ուղղությամբ կատարվող գործողությունը կարելի է թարգմանել առանց բազմապատկական ածանցի կամ բայարմատի կրկնության՝ *թռչունը թռչում է, երեխան վազում է*, իսկ տարբեր ուղղություններով մի քանի անգամ կատարվող գործողությունը՝ բազմապատկական ածանցով՝ *թռչունը թռչկոտում է*, և բայարմատի կրկնությամբ՝ *երեխան վազվզում է*: *Անգլերենում* շարժման բայերը մասամբ արտահայտվում են գործողության տևականության և ոչ տևականության միջոցով՝ *the bird flies, the bird is flying*, և *the baby runs, the baby is running*: Այսինքն՝ մեկ անգամ մեկ ուղղությամբ կատարվող ոչ տևական գործողությունն արտահայտվում է պարզ ներկայի՝ *Present Simple*-ի բայաձևով, իսկ մի քանի անգամ տարբեր ուղղությամբ, այն է՝ տևական գործողությունը՝ ներկա շարունակականի՝ *Present Continuous*:

*Անգլերենի* բայի առանձնահատկությունները *հայերենի* և *ռուսերենի* համեմատությամբ շատ են, քանի որ, բացի եղանակաժամանակային ձևերից, կան մոդալ բայերով կազմություններ: *Մոդալ բայերն անգլերենի* խոնարհման համակարգի կարևոր բաղադրիչն են, որոնք, սակայն, *հայերենում* և *ռուսերենում* հիմնականում արտահայտվում են նկարագրական եղանակով: *Անգլերենի մոդալ բայերի* կազմությունն անջատակության տիպիկ օրինակ է. չկան քերականական

մենիմաստ և բազմիմաստ մասնիկներ, կա մեկ մենիմաստ՝ մոդալ բայ, և մեկ բազմիմաստ՝ դիմաթվային իմաստ արտահայտող դերանուն, բառ-մասնիկ:

*Անգլերենի* խոնարհման համակարգի անբաժանելի մասն են կազմում նաև բաղադրյալ ստորոգյալները (*составные глаголы*) կամ *բայական բառակապակցությունները*: *Անգլերենի՝ ետադրություններով* կազմված *բայական բառակապակցությունները* մասամբ նմանեցրել ենք *հայերենի* հարադիր բայերին այն առումով, որ կազմված են իմաստային և քերականական տեսանկյունից երկու և ավելի անբաժանելի բաղադրիչներից, բաղադրիչների ամբողջությունը հաճախ արտահայտում է դարձվածքային իմաստ, դրանք լեզվի կենսունակ միավորներ են: Նմանություններից բացի գտել ենք նաև երեք էական տարբերություն: Օրինակ, եթե *անգլերենի* բայական բառակապակցությունները կազմված են մեկ բայից, ապա *հայերենի* հարադիր բայերի կազմում կարող են ընդգրկված լինել երկու և ավելի բայեր՝ *անցնել-գնալ, ուտել-պրծնել, առնել-ծախել*: Երկրորդ տարբերությունն այն է, որ *անգլերենի* բայական բառակապակցության *բայական* բաղադրիչը նախադաս դիրքում է. *bring up, put on, stand for, look up, put out, come round*, իսկ *հայերենում*՝ ետադաս. *ձայն տալ, ձեռք տալ, կտոր-կտոր անել*: Երկու և ավելի *անկախ բայերից* կազմված հարադիր բայերում ետադաս դիրքում է հիմնական կամ վերջնական իմաստն արտահայտող բայը. *վազել-գնալ-իմաց տալ, աղաչել-պաղատել*, իսկ *անորոշից* և *տալ* բայից կազմված հարադիր բայերում ետադաս դիրքում է կազմությանը պատճառական իմաստ արտահայտող *տալ* բայը. *հոգի տալ, սիրտ տալ, կյանք տալ, ձեռք տալ*: *Հայերենի* խոնարհված հարադիր բայի կազմում ավելանում է *էմ* օժանդակ բայը, որը դրվում է հարադրի և բայական բաղադրիչի միջև: *Երրորդ տարբերությունն* այն է, որ *հայերենի* հարադիր բայերի կազմում չկան սպասարկու բառեր՝ *wait for, go in, go away, let in*: Իհարկե, *հայերենի* հարադիր բայերի կազմում կան այնպիսի բաղադրիչներ, որոնց խոսքիմասային պատկանելությունն առանձին վերցրած դժվար է որոշել. դրանք չունեն անկախ գործածություն և գերազանցապես կատարում են հարադրի դեր, օրինակ՝ *ման գալ, շուտ գալ, թաք կենալ, եռ գալ, հույ տալ, ձիգ տալ, փուլ գալ, անց կենալ, խոյս տալ, շուտ տալ, պոկ գալ, վազ տալ*:

*Անգլերենի* բայական բառակապակցությունները *ռուսերենում* արտահայտվում են մեկ բառի միջոցով կամ նկարագրական եղանակով:

Ատենախոսությունն ավարտվում է հետազոտության արդյունքներն ամփոփող հետևյալ **եզրակացություններով**:

Ուսումնասիրության նպատակը երեք լեզուների դիմավոր բայի գուգադրական տիպաբանական քննությունն էր: Ըստ այդմ՝ կարելի է ներկայացնել *հայերենի, ռուսերենի* և *անգլերենի* լեզվական տիպին բնորոշ հատկանիշները թվային արտահայտությամբ, իսկ հատկանիշների թվային արտահայտությունը վերլուծել ենք երեք լեզուների բայի դիմավոր ձևերի

բանաձևերի զուգադրական-տիպաբանական քննության միջոցով: Բանաձևերը կազմելիս հաշվի ենք առել հետևյալ նկատառումները.

- 1) Դերանունները, ըստ էության, բայի կազմում չունեն տեղ, բայց *անզլերենի* և *ռուսերենի* որոշ ժամանակների բանաձևերի կազմության ժամանակ դրանք ևս ներառվել են: Չուգադրական-տիպաբանական քննության ժամանակ հիմք-լեզուն *հայերենն* է, հետևաբար, *հայերենի* առանձնահատկությունները հաշվի առնելով, պետք է վերլուծեինք *ռուսերենի* և *անզլերենի* բայական համակարգը և զուգադրվող երկու լեզուների այն ժամանակաձևերը, որտեղ բայի դեմքի և թվի իմաստն արտահայտվում է դերանունների միջոցով, դրանք ներառել ենք բանաձևերի մեջ և դիտարկել որպես անջատման մեթոդով բայաձևին միացող բազմիմաստ բառ-մասնիկ:
- 2) *Անզլերենի* ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի *-s(es)* քերականական մասնիկը կցվում է բային, բայց այն, ի տարբերություն *-ing* և *-ed* քերականական մասնիկների, դիտարկել ենք որպես բազմիմաստ քերականական մասնիկներ՝ հաշվի առնելով ներկա անկատար ժամանակաձևում վերջիններիս բազմիմաստությունը՝ երրորդ դեմք և եզակի թիվ:
- 3) *Ռուսերենի* այն ժամանակաձևերի բայաձևերում, որտեղ *հայերենի ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների* բայաձևերի նման խոնարհիչները պահպանվում են, մի դեպքում այդ խոնարհիչները դիտարկել ենք որպես *կցում*, մյուս դեպքում՝ թեքում: Կցում է, եթե ժամանակաձևերը կազմելիս խոնարհիչը չի ենթարկվում փոփոխության՝ *играть-играл, брать-брал*, թեքում է, եթե խոնարհիչը ենթարկվում է փոփոխության՝ դրանով իսկ արտահայտելով քերականական նոր իմաստ՝ *решить-решать, решать*:
- 4) Բանաձևերի կազմության ժամանակ, չնայած պայմանական և հարկադրական եղանակների եղանակիչների գործառությանին տարբերություններին, *կ-* և *պիտի/պետք* է եղանակիչները նշանակել ենք նույն նշույթով՝ *dz*-ով. սա շփոթ չի առաջացնում, քանի որ բանաձևերում՝ դրանց անջատ և բառին կից գրվելու ձևից երևում է, որ մի դեպքում *dz*-ը քերականական մասնիկ է, մյուս դեպքում՝ քերականական իմաստ արտահայտող բառ-մասնիկ՝ *dzAczb, dz+Aczb*:

Այսպիսով, զուգադրվող լեզուների բայի ներգործական սեռի դիմավոր ձևերը, ընդհանուր սկզբունքով քննելով, կազմել ենք հավելվածում ներկայացրած աղյուսակի բանաձևերը և ըստ այդմ՝ կատարել դիմավոր բայերի տիպաբանական և քանակային վերլուծություն:

Կազմված բանաձևերը ցույց են տալիս, որ չնայած *հայերենի* և *անզլերենի* համեմատությամբ *ռուսերենի* ժամանակաձևերը քիչ են, սակայն *ռուսերենի* դիմավոր բայի համակարգն ամենաբազմազանն է: Պատճառը մի կողմից

ռուսերենի անորոշ դերբայի բաղադրիչների բազմազանությունն է, մյուս կողմից՝ այն, որ *ռուսերենում* դիմավոր բայի բանաձևը եզակի և հոգնակի թվերի կազմության ժամանակ փոխվում է:

Բանաձևերի բազմազանությամբ *հայերենը* և *անգլերենը* գրեթե հավասար են: *Անգլերենի* ժամանակաձևերը, ի տարբերություն ռուսերենի և հայերենի ժամանակաձևերի, ճիշտ է, շատ են, սակայն *անգլերենում* բանաձևերի բազմազանություն չկա. յուրաքանչյուր ժամանակաձև ունի կազմության մեկ բանաձև, բացառություն է կազմում ստորադասական եղանակը՝ *չորս բանաձև* (երկուսը՝ առաջին, երկուսը՝ երկրորդ ստորադասականի համար): Չնայած զուգադրվող լեզուների համեմատությամբ *ռուսերենն* ունի ամենաքիչ ժամանակաձևերը, բայց՝ ամենաշատ բանաձևերը: *Ռուսերենում* բայաձևերի կազմությունը կանոնակարգված չէ., ինչպես *անգլերենում*, այդպես էլ *ռուսերենում* բանաձևերի բազմազանությամբ աչքի է ընկնում ստորադասական եղանակը՝ *տասնվեց բանաձև*, իսկ ամենականոնակարգվածը անցյալ կատարյալ ժամանակաձևն է՝ *չորս բանաձև*: *Հայերենը* երկու լեզուների միջև միջին դիրք է գրավում, բայց, ի տարբերություն *անգլերենի* և *ռուսերենի* ժամանակաձևերի, *հայերենում* բայաձևի կազմություններն առավել կանոնակարգված են: Բոլոր ժամանակաձևերն ունեն կազմության առավելագույնը *չորս բանաձև*:

Անգլերենը մենիմաստ և բազմիմաստ քերականական մասնիկների բազմազանությամբ աչքի չի ընկնում, մինչդեռ, ի տարբերություն *հայերենի* և *ռուսերենի*, սահմանական եղանակում հանդես են գալիս զուգադրվող մյուս երկու լեզուների նույն համակարգում արտահայտություն չունեցող ժամանակաձևեր: *Հայերենում* հակառակն է, սահմանական եղանակի ժամանակաձևերի թվով երկու լեզուների համեմատությամբ միջին դիրք է գրավում, սակայն ժամանակաձևերն ունեն կազմության մի քանի բանաձևեր. դրանք թվով քիչ են *ռուսերենի*, շատ՝ *անգլերենի* նույն ժամանակաձևերի կազմության բանաձևերից:

Չուգադրվող երեք լեզուների դիմավոր բայը քննել ենք նաև ըստ բայաձևի քերականական մասնիկների արտահայտած իմաստի և ըստ բայաձևի բաղադրիչների կազմության ձևի վերհանած տվյալների և հաշվել եղանակաժամանակային կազմության ձևերում մենիմաստ, բազմիմաստ քերականական մասնիկների, բառ-մասնիկների և բայի դիմավոր ձևի բաղադրիչների առավելագույն թիվը: Եղանակաժամանակային բոլոր ձևերի կրավորական կառույցներն առանձին-առանձին չենք ներառում հարացույցում. *հայերենի* և *ռուսերենի* դեպքում աղյուսակում ընդգրկում ենք ընդհանուր որպես մեկ կցում՝ *-վ-, сѣ (сѣ)*, իսկ *անգլերենում*՝ մեկ անջատում՝ *v*, կամ մեկ անջատում և մեկ կցում՝ *va (be+ing)*:

Համակարգային բնույթ են կրում նաև *պատճառական ածանցները*՝ հանդես գալով խոնարհման հարացույցի բոլոր ձևերում, հետևաբար պատճառական ածանցները ևս կրավորական ածանցի նման ներառում ենք հարացույցի մեջ

որպես մեկ կցում, իսկ պատճառական բայերի՝ անցյալ կատարյալից կազմված ձևերում՝ մեկ թեքում՝ *ցն>ցր*:

Կցման, թեքման, անջատման ցուցիչների թիվը որոշելու համար հաշվի ենք առել հետևյալ առանձնահատկությունները.

- 1) մենիմաստ քերականական մասնիկների թիվը զուգադրվող լեզուներում հավասար է *կցումների թվին*,
- 2) *թեքումների թիվը* պարզելու համար հաշվում ենք բազմիմաստ քերականական մասնիկների և բազմիմաստ բառ-մասնիկների թիվը (հայերենում՝  $1+8+6=14$ , որտեղ առաջինը պատճառական բայերի անցյալ կատարյալից կազմված ձևերում *ն>ր* հերթագայությունն է, ռուսերենում՝  $1+3+2=6$ , որտեղ երկուսը ներկային կազմված երկու ժամանակաձևերի որոշ բայաձևերում արմատական բաղադրիչում հնչյունական հերթագայությունն է՝ լեզուների թեքական տիպին պատկանող հատկանիշ), ազլերենում թեքումների թիվը պարզելու համար բազմիմաստ քերականական մասնիկների և բազմիմաստ բառ-մասնիկների թվից հանում ենք դերանունների թիվը՝  $36-18=18$ , քանի որ դրանց արտահայտած դիմաթվային իմաստը թեքական լեզուներին բնորոշ հատկանիշ չէ, այլ դերանվան առանձնահատկություն (տե՛ս երեսուներկուերորդ աղյուսակում),
- 3) *անջատումների թիվը* հավասար է մենիմաստ և բազմիմաստ բառ-մասնիկների թվին (հայերենում՝  $3+6=9$ , ռուսերենում՝  $5+1=6$ , անզլերենում՝  $13+35=48$ ):

*Աղյուսակ 1: Հայերենի, ռուսերենի անզլերենի դիմավոր բայի բաղադրիչների վիճակագրություն ըստ տիպաբանական առանձնահատկությունների.*

Ցուցիչ	Առավելագույն թիվը		
	Հայերեն	Ռուսերեն	Անզլերեն
Մենիմաստ քեր.մասնիկ	34	21	16
Բազմիմաստ քեր.մասնիկ	8	3	1
Մենիմաստ բառ-մասնիկ	3	5	13
Բազմիմաստ բառ-մասնիկ	6	1	35
Կցում	35	21	16
Թեքում	15	6	18
Անջատում	9	6	48
Բառաձևի առավելագույն թիվը	2	3	5
<b>Բառաձևի նվազագույն թիվը</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>1</b>

Եթե *անզլերենի*՝ երկու անջատումով կազմված մոդալ բայերը ևս ներառենք վիճակագրական աղյուսակում, անջատումների թիվը կլիներ քսանչորս. 12 մոդալ բայ X 2 անջատում=24 անջատում, բայց քանի որ դրանք չեն մտնում

եղանակաժամանակային ձևերի կազմի մեջ, վիճակագրական աղյուսակում չենք ներառում:

Ըստ աղյուսակի՝ դիմավոր բայի համակարգում զուգադրվող լեզուներից յուրաքանչյուրում լավագույնս դրսևորվել են տիպին բնորոշ հատկանիշները: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս.

- 1) *Հայերենի* բայական համակարգում ամենաշատը կիրառվում են մենիմաստ քերականական մասնիկներով դիմավոր բայի կազմությունները: Հետաքրքիրն այն է, որ զուգադրվող լեզուների համեմատությամբ բազմիմաստ քերականական մասնիկներով աչքի է ընկնում *հայերենը*, թեև դա պետք է բնորոշ լիներ *ռուսերենին*, *իսկ անգլերենի* դիմավոր բայի համակարգն աչքի չի ընկնում բազմիմաստ քերականական մասնիկներով, միայն կա մեկ օրինակ՝ անորոշ ներկայի եզակի երրորդ դեմքը:
- 2) Մենիմաստ և բազմիմաստ բառ-մասնիկներ կան և՛ *հայերենում*, և՛ *ռուսերենում*, սակայն մենիմաստ և բազմիմաստ բառ-մասնիկներով հարուստ է *հատկապես* անգլերենի դիմավոր բայի համակարգը: *Անգլերենը* պահպանել է բառակազմության՝ անջատական լեզուներին բնորոշ առանձնահատկությունը:
- 3) Բառաձևերի առավելագույն թիվն ունի վերլուծական կազմություն ունեցող *անգլերենի* դիմավոր բայի համակարգը հինգ բառաձև (ապառնի վաղակատարը և ապառնի վաղակատարն անցյալում՝ *I shall/should have been eating*), ինչպես նաև ապառնի վաղակատարը՝ *I will have been killed*: Բառաձևերի նվազագույն թիվը մեկն է. այս դեպքում ևս անգլերենն ունի տիպիկ օրինակ, այն է՝ անորոշի ձևի հետ համընկնող հրամայական եղանակի արմատական կազմություն ունեցող բայաձևը՝ *do it, smile freely*:
- 4) *Հայերենում* լայն կիրառություն ունեն նաև թեքական հատկանիշ ունեցող դիմաթվային վերջավորությունները, ընդ որում, ավելի քան *ռուսերենում*, թեև թեքումը *ռուսերենի* լեզվական տիպին բնորոշ հատկանիշ է: Իսկ *անգլերենում* թեքումն արտահայտվում է օժանդակ բայերի ներկայի և անցյալի ձևերի գործածության ժամանակ, երբ բառ-մասնիկը ներքին թեքման է ենթարկվում (*shall-should, will-would*): *Հայերենի* բայական համակարգում նմանատիպ օրինակները քննվում են որպես անկանոնություններ:
- 5) Բառ-մասնիկների միջոցով՝ անջատումով, դիմավոր ձևերի կազմությունը հատուկ է անգլերենին: Աղյուսակում զգալի են զուգադրվող լեզուների թվային տվյալների միջև տարբերությունները. *անգլերենի* համեմատությամբ ցուցիչների թիվը *հայերենում*՝ գրեթե հինգ անգամ, իսկ *ռուսերենում* գրեթե ութ անգամ պակաս է:



- 6) Քանի որ *անգլերենի* անջատման ցուցիչը մեծ է *ռուսերենի* և *հայերենի* ցուցիչների թվից, հետևաբար *անգլերենի* դիմավոր բայը կունենա բառաձևերի ամենամեծ թիվը՝ հինգ բառաձև: Ամենաքիչը *հայերենին* է, սահմանական եղանակի վերլուծական ժամանակաձևերը կազմված են առավելագույնը երկու բաղադրիչից (հարկադրական եղանակի *պետք է* եղանակիչի է-ն առանձին չենք դիտարկում):
- 7) *Անգլերենում* կրավորական սեռի կառույցները հանդես են գալիս լեզուների անջատական տիպին բնորոշ առանձնահատկություններով: Եթե *հայերենում* և *ռուսերենում* կրավորական իմաստն արտահայտում են քերականական մեծիմաստ մասնիկները՝ *-վ-*, *-с(ь)*, ապա *անգլերենում* այն արտահայտվում է կա՛մ օժանդակ բայի և անցյալ դերբայի կիրառությամբ, կա՛մ, որ առավել հաճախադեպ է, բառմասնիկով: Ընդ որում՝ բոլոր ժամանակաձևերի համար չկա մեկ ընդհանուր բառ-մասնիկ: Օրինակ՝ անորոշ անցյալի դեպքում *was/were*-ն է, վաղակատարի դեպքում՝ *been*-ը, ապառնիի դեպքում՝ *be*-ն, շարունակականում՝ *being*-ը: Այդ տեսանկյունից *անգլերենի* կրավորական կառույցները նման չեն *հայերենի* և *ռուսերենի* կրավորական կառույցներին: Ջուգադրվող լեզուները մեկ ընդհանուր սկզբունքով քննելու նպատակով կրավորական կառույցի այն բաղադրիչը, որի հավելումով կառույցը դառնում է կրավորական, պայմանականորեն նշանակել ենք *v* (շարունակականի դեպքում՝ *vd*) նշույթով:

*Ռուսերենի -с(ь)* քերականական մասնիկը կցվում է բային վերջադաս դիրքում՝ դրսևորելով կցական լեզուներին բնորոշ հատկանիշ: Այս առանձնահատկությունը բխում է նրա ծագումից: Ինչպես արդեն նշել ենք, քերականական մասնիկն առաջացել է *себя* բառից: Ստացվում է՝ *հայերենի* և *անգլերենի* կրավորական կառույցները պահպանում են լեզվի ձևաբանական տիպին բնորոշ հատկանիշները, իսկ ռուսերենինը՝ ոչ:

Այսպիսով, *հայերենի*, *ռուսերենի* և *անգլերենի* բայական համակարգերում առավելապես պահպանվում են զուգադրվող լեզուներից յուրաքանչյուրի լեզվական տիպին բնորոշ հիմնական առանձնահատկությունները՝ բացառությամբ ռուսերենի: Ըստ ցուցիչների վերլուծության՝ *հայերենի* կանոնավոր բայերի համակարգում գերիշխում է լեզուների կցականության հատկանիշը, ապա թեքականության, իսկ նախորդ երկուսի համեմատությամբ քիչ է դրսևորվում անջատականության հատկանիշը: *Ռուսերենի* խոնարհման համակարգում գերիշխում է կցականության հատկանիշը, իսկ թեքականության և անջատականության հատկանիշների թիվը հավասար է: *Անգլերենի* խոնարհման համակարգում գերակշռում է անջատականության հատկանիշը, ապա՝ կցականության, իսկ ամենաքիչը թեքականության օրինակներն են (անկանոն բայերի համակարգում թեքականության հատկանիշները կցականից շատ են):

*Աղյուսակ 2: Կանոնավոր բայերի խոնարհման համակարգում կցականության, թեքականության, անջատականության արտահայտությունը տոկոսային հարաբերությամբ.*

Լեզու	Առաջին տեղ	Երկրորդ տեղ	Երրորդ տեղ
Հայերեն	կցում - 60.3 %	թեքում - 24.1 %	անջատում - 15.6 %
Ռուսերեն	կցում - 63.6 %	թեքում - 18.2 %	անջատում - 18.2 %
Անգլերեն	անջատում - 58.5 %	թեքում - 21.9 %	կցում - 19.6 %

**Հավելվածում** ներկայացրել ենք չորս աղյուսակ՝ հայերենի, ռուսերենի և անգլերենի բայի դիմավոր ձևերի բանաձևերի աղյուսակը, հայերենի, ռուսերենի, անգլերենի դիմավոր բային բնորոշ հատկանիշների առավելագույն թիվը և թվային վիճակագրության ընդհանրացումը (ըստ բայաձի քերականական մասնիկների արտահայտած իմաստի և բայաձևի բաղադրիչների կազմության ձևի):

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Լ. Մուրադյան, Հայերենի, ռուսերենի, անգլերենի բայի ներկա ժամանակին հարող ժամանակաձևերի զուգադրական-տիպաբանական քննություն, Հայ գրաստպության 500-ամյակին և ԵՊՀ 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 62-66:

2. Լ. Մուրադյան, Անգլերենի մոդալ բայերի ժամանակաձևային արտահայտությունը հայերենում և ռուսերենում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2013, էջ 101-107:

3. Լ. Մուրադյան, Կցականության, թեքականության, անջատականության արտահայտությունը հայերենի, ռուսերենի և անգլերենի անցյալ անկատար ժամանակաձևերում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական IV գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2014, 47-56:

4. Լ. Մուրադյան, Հայերենի, ռուսերենի, անգլերենի անկանոն բայերի կադապարային զուգադրական-տիպաբանական քննություն, «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական V գիտաժողովի նյութեր», Երևան, 2015, էջ 26-32:

5. Լ. Մուրադյան, Հայերենի, ռուսերենի և անգլերենի հրամայական եղանակի զուգադրական-տիպաբանական քննություն, Բանբեր (Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան), Երևան, 2016, 342-349:

**МУРАДЯН ЛУСИНЕ ЗОГРАКОВНА  
СОПОСТАВИТЕЛЬНО-ТИПОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ СПРЯГАЕМЫХ  
ГЛАГОЛОВ АРМЯНСКОГО, АНГЛИЙСКОГО И РУССКОГО ЯЗЫКОВ**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.02 – “Общее и сравнительное языкознание”  
Защита состоится 14 ноября 2016г. в 15:00ч. на заседании специализированного совета ВАК по лингвистике 019 при Институте языка им. Р. Ачаряна НАН РА (адрес: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15)

### **РЕЗЮМЕ**

**Цель диссертации** с точки зрения синхронии - представить типологические особенности армянского, русского и английского языков, сопоставить по грамматическим категориям и выявить особенности и различия этих языков. Цель диссертации не только выявление типологических особенностей одного языка, но и не типичные особенности языков, например, в системе спряжения армянского языка для выражения нового грамматического значения, какой способ более распространен кроме агглютинации, изолирование или флексия, в русском- агглютинация или использование слов-частиц, а в английском-агглютинация или фузия?

**Актуальность диссертации.** Во время преподавания трех типов языков-изолирующие, агглютинативные, флективные, типологические особенности выявляются при помощи примеров двух самых распространенных языков в Армении, это-русский и английский. Но до сегодняшнего дня нет всестороннего исследования, которое может служить как образовательное исследование типологических особенностей спряжения глаголов трех языков методом сопоставления.

**Научная новизна и практическое значение.** В языкознании нет полного синхронного исследования трех разных лингвистических типов-армянского, русского и английского языков. Впервые делается попытка одним общим принципом сопоставить спрягаемые глаголы трех по разному типу языков, создать типологические формулы этих глаголов, сопоставить и выявить типологические особенности и различия, а так же на основе сходств и различий делать процентный анализ изолирующих, агглютинативных, флективных черт сопоставляемых языков.

**Исследуемый материал диссертации.** Исследуемый материал диссертации - анализ грамматических категорий трех сопоставляемых языков. Основные характерные черты языкового типа представлены анализом категории наклонений. Предметом исследования являются не только языковые всеобщности, но и различия.

**Диссертация состоит** из введения, двух глав, заключения, списка использованной литературы и приложения. Исследование состоит из 147-и страниц. Сначала на основе морфологических категорий мы сопоставили особенности спрягаемых глаголов трех по типу языков, после этого исследовали только те особенности каждого из сопоставляемых языков, которые не выявляются в двух других сопоставляемых языках.

**Во введении** представляются типологические особенности сопоставляемых языков-армянского, русского и английского, соответственно как языки агглютинативного, флективного и изолирующего строя, а также указываются лингвистические особенности трех типов, на основе которых в первой и во второй главе выполняли анализ спрягаемых глаголов.

**В первой главе** диссертации “Сопоставление и типология грамматических категорий” методом сопоставления по отдельности представляются грамматические категории трех языков. Если анализ грамматических категорий лица и числа, времени, аспекта, залога (в том числе рода) носят более теоретический характер, то категория наклонения-также и практический.

**Во второй главе** “Особенности характеризующие каждого из языков” представлены те характерные особенности каждого из трех языков, которые не выражены в вербальных системах двух других языков. В армянском это, например, отрицательное спряжение и запретительный императив, в русском-особенности построения совершенного и несовершенного вида, в английском-построения времен модальными глаголами.

**В заключении** представляются выводы, обобщающие результаты исследования, в соответствии с которыми в вербальных системах армянского, русского и английского языков в основном сохраняются типологические особенности каждого из сопоставляемых языков, кроме русского языка. В спрягаемых глаголах русского языка преобладает агглютинация, а флективные и изолирующие особенности равняются. Процентный анализ типологической характеристики сопоставляемых трех языков представлен в нижеуказанной таблице.

<b>Язык</b>	<b>Первое место</b>	<b>Второе место</b>	<b>Третье место</b>
<i>Армянский</i>	агглютинация- 60.3 %	флексия- 24.1 %	изоляция – 15.6 %
<i>Русский</i>	агглютинация – 63.6 %	флексия - 18.2 %	изоляция – 18.2 %
<i>Английский</i>	изоляция – 58.5 %	флексия -21.9 %	агглютинация – 19.6 %

**LUSINE ZOHRAK MURADYAN**  
**COMPARATIVE-TYPOLOGICAL ANALYSIS OF ARMENIAN, ENGLISH AND**  
**RUSSIAN CONJUGATED VERB**

Thesis for the degree of candidate of philological sciences, specialty 10.02.02- “General and Comparative Linguistics”.

The defense of the thesis will be held on 14 november, 2016, at 15<sup>00</sup>, at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) in the

Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (address: 0015, st. G. Lusavorich, 15).

### SUMMARY

**The aim of the dissertation** is to represent the typological features of the Armenian, English and Russian languages in synchronous approach, to contrast the grammatical categories and to reveal the characteristic features and differences of the languages under study. The aim of the dissertation is not only the detection of typical features of one language, but also that of the non typical features, for example, in conjugation system of Armenian language except agglutination, which method is more common method for expressing a new grammatical meaning, isolation or flection, in Russian-agglutination or isolation, and in English language-agglutination or flection?

**The modernity of the thesis.** While lecturing about three types of languages-agglutinative, flective and isolative, typological features are identified with the help of examples of two most widely spoken languages in Armenia- Russian and English languages. But till now there isn't a comprehensive study, which can serve as an educational research of typological features of verb conjugation of three languages by means of their contrastive analysis.

**Scientific newness and practical value.** In linguistics there isn't full simultaneous study of Armenian, Russian and English-languages belonging to three different linguistic types. For the first time in a common principle we are trying to compare the conjugate verbs on three different types of languages, to create the typological formulas of these verbs, to compare and to reveal the typological features and differences and on the basis of similarities and differences do numeral and rate analyses of agglutinative, flective and isolative characters of the three languages under comparison.

**The study material of dissertation.** The study material of dissertation is grammatical categories of comparative languages. The typological features are presented by analysis of grammatical category of mood. The subject of the study are not only the generalities, but also differences.

**The dissertation consists** of an introduction, two chapters, conclusions, bibliography and appendices. The research consists of 147 pages. At first on the basis of morphological categories we compare the features of conjugated verbs of three types of languages, after which we examine only those features of each of the compared languages, which are not detected in the other two languages being compared.

**The introduction** presents typological features of three languages under comparison-Armenian, English and Russian, respectively as an agglutinative, flective and isolative structure of the language, and there are indicated linguistic features of three types, on the basis of which analysis of conjugate verbs was performed in the first and in the second chapters

In the **first chapter** of the thesis ("Comparison and typology of grammatical categories") by comparison the grammatical categories of three languages are presented

separately. But if analysis of the grammatical categories of person and number, time, aspect, pledge (including the nominal genus) are described more theoretically, the category of mood is analysed not only theoretically, but also practically.

In the **second chapter** of the thesis (“Features characterizing each language”) are presented those characteristic features each of the three languages, which aren’t expressed in the verbal systems of the other two languages. For example, in the Armenian negative and prohibitive imperative conjugations are not expressed, in Russian-the construction of perfect and imperfect species, in English-the time construction with modal verbs.

**In the conclusions** the derivations are presented, which are generalizing the findings of the research, whereby in verb systems of Armenian, English and Russian languages mainly the typological features of each of the compared languages are preserved, except for that of the Russian language. In the conjugate verbs of Russian language agglutination prevails, but the flective and isolative features are aligned. The interest analysis of three comparative languages' typological characteristics is presented in the table below.

<b>Language</b>	<b>The first place</b>	<b>The second place</b>	<b>The third place</b>
<i>Armenian</i>	agglutination - 60.3 %	flexion - 24.1 %	insulation – 15.6 %
<i>Russian</i>	agglutination – 63.6 %	flexion - 18.2 %	insulation – 18.2 %
<i>English</i>	insulation – 58.5 %	flexion -21.9 %	agglutination – 19.6 %

